

# ԼՈՒԻ ՊԱՍՏԵՐ

(նրա 70-ամնակի առթիւ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՆՐԱ ԱՐԱՄ ԳԻՒՏԵՐԻ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱԴԵԱՆԻ

Դեկտեմբերին, 1892 թ. լրացաւ Լուի Պաստերի կեանքի 70-ամեակը: Պարիզի Գիտութեանց շեմարանի առաջարկութեամբ բազմաթիւ դիտնական ընկերութիւններ—ընագիտական, բժշկական զիւղատնտեսական—օգուեցին 70-ամեայ յորելեանով յայտնելու Պաստերին իրանց խորին յարգանքը և երախտագիտութիւնը:

Նշանաւոր է այն հանգամանքը, որ տօնախմբութեանը մասնակցեցին ոչ միայն ֆրանսիական, այլ և միւս ազգութիւնների դիտնական ընկերութիւնները: Նոյն իսկ մեր Քիֆլիսում Պաստերի ծննդեան օրը (դեկտեմբերի 15) կարդացւեցան մօտ 10 զեկուցում Պաստերի աշխատանքների առթիւ Կովկասեան Գիւղատնտեսական և բժշկական ընկերութեանց նիստերում: Այդ ընկերութիւնները 15 դեկտեմբերի նշանակել էին արտակարգ—պատեօրական նիստեր:

Տեսնելով այդ ընդհանուր ոգևորութիւնը, մարդու զլխում բնականաբար հարց է յարուցւում, թէ ի՞նչ է արել Պաստերը, ի՞նչ է պատճառը, որ նա արժանացել է աշխարհիս ամեն երկրում գտնուող ինտելիգենտ հասարակութեանց խորին յարգանքին:

## I

Լուի Պաստերը ծնւեց 1822 թ. դեկտեմբերի 15-ին Դոլում (Ֆրանսիա): Նրա հայրը, որ մի աշխատասէր արհեստաւոր էր, յայտնի

էր բնական խոշոր խելքով: Երբ փոքրիկ և, ունին հասաւ երկու տարեկան հասակին, նրա ծնողները նրա հետ փոխեցին մշտական բնակութեան համար Սրբուա: Այդտեղ նա ստացաւ իւր սկզբնական ուսումը, յետոյ շարունակեց Բեզանտնում, ուր և աւարտեց միջնակարգ դպրոցի դասընթացը:

Բարձրագոյն ուսումը նա ստացաւ Պարիզի հռչակաւոր Ecole normale-ում <sup>1)</sup>, ուր նա լսում էր յայտնի քիմիկոս Բալարի դասախօսութիւնները: Բացի դրանից նա միւսնոյն ժամանակ յաճախում էր երեւելի Գիւմայի դասախօսութիւնները, Գիւման այդ ժամանակ ունէր քիմիայի ամբիոնը Սորբոնում <sup>2)</sup>:

Բնագիտութիւնը, մանաւանդ քիմիան, Պաստեօրը ուսումնասիրում էր յափշտակութեամբ՝ բառիս բուն նշանակութեամբ: Պաստեօրը դեռ շատ ջանք էր, 25 տարեկան, երբ արաւ առաջին գիւտը: Այդ վերջինը այնքան անսպասելի և զարմանալի էր, որ Գիտութեանց ձեմարանը սկզբում վերաբերեց թերահաւատութեամբ դէպի Պաստեօրի գիւտը, յանձնելով յայտնի ֆիզիկոս — Բիօնին, որ սա ներկայ դռնի Պաստեօրի փորձերին և իր կարծիքը յայտնի ձեմարանին Պաստեօրի գիւտի մասին:

Շուտով Բիօն զեկուցում աւեց ձեմարանին, զեկուցման մէջ նա ոգևորութեամբ ասում էր, որ Պաստեօրը արեւ է մի արտակարգ մեծ գիւտ:

Ես կանգ չեմ առնիլ այդ գիւտի վերայ, որը հիանալի կերպով լուսաւորեց գիտութեան ամենամութը անկիւններից մէկը, որովհետեւ այդ գիւտը կրում է բուն մասնագիտական բնաւորութիւն:

Շնորհիւ իր արտակարգ ընդունակութիւններին, նրա անունը շուտով հռչակեց, այնպէս որ, դեռ շատ ջանք է լինելով, նա նշանակեց քիմիայի պրոֆեսօր Ստրասբուրգում: Իսկ 32 տարեկան հասակում նա ստացաւ բնական գիտութեանց ֆակուլտետի ղեկանի <sup>3)</sup> պաշտօնը լիլում:

<sup>1)</sup>, <sup>2)</sup> Բարձրագոյն դպրոց է Պարիզում:

<sup>3)</sup> Համալսարաններում ամեն մի ֆակուլտետի պրոֆեսօրները ընտրում են իրանց միջից ամենաաչքի ընկնողին ֆակուլտետի ղորձերը վարելու համար: Այդ ընտրածը անւանում է ղեկան:

Այդ ժամանակներն էր, երբ Պաստօրը արաւ իր ամենանշանաւոր գիւտը, որը վերաբերում է խաղողի շիրաչի եփմանը: Երկու տարի սրանից առաջ տպւեց Վոլքըն-ում իմ մի ընդարձակ յօդուածը՝ «Միկրոօններ» վերնագրով. այդ յօդուածում՝ խօսելով եփման մասին, ես ստիպուած էի առաջ բերել Պաստօրի արած հետազօտութիւնները այդ հարցի վերաբերեալ:

Այդ հարցը այնքան նշանաւոր է, որ այժմ մի ընդհանուր տեսութիւն անելով Պաստօրի գիւտերի վրայ, անկարելի է նորից չը վերադառնալ նոյն հարցին և չը չիշեցնել ընթացողին Պաստօրի այդ երեւելի հետազօտութիւնների գլխաւոր կէտերը:

Իսկ դրա համար ինձ հարկաւոր է քաղածօրէն առաջ բերել իմ առաջնայ յօդուածից այն կտորները, որոնք վերաբերում են Պաստօրի գիւտին <sup>1)</sup>:

Ամենքը գիտեն, որ խաղողի շիրան բարեպատեհ պայմաններում առհասարակ չի մնում անփոփոխ, այլ մի երկու կամ երեք օրից յետոյ նրա մէջ սկսւում են կատարել խորին փոփոխութիւններ. հեղուկից սկսւում է դուրս գալ մի ինչ որ զազ, նրա քաղցրութիւնը շուտով կորչւում է, անհետանում է նաև հեղուկի թանձրութիւնը: Այդ երեւոյթը անւանւում է եփումք:

Քիմիական տեսակէտից փոփոխութիւնը, որ կատարւում է շիրաչի հետ եփման ժամանակ, կայանում է հետեւեալ հասարակ իրողութեան մէջ: Շիրաչի մէջ կայ բաւական շատ շաքար, որի պատճառով հէնց շիրան լինում է քաղցր և թանձր: Երբ սկսւում է եփումը, շաքարը լուծւում է երկու աւելի հասարակ նիւթերի, այն է ալկոհոլի և ածխաթթւատի: Ուրեմն եփման ժամանակ շաքարը կամաց կամաց անհետանում է, իսկ անհետացած շաքարի քանակութեան համեմատ գոյանում են ածխաթթւատ և ալկոհոլ:

Ածխաթթւատը, զազ լինելով, արագութեամբ դուրս է գալիս հեղուկից: Դուրս թռչող զազը սաստիկ շարժում է հեղուկը այնպէս, ինչպէս շարժում է գոլորշին՝ դուրս թռչելով եփ եկող ջրից: Այդ արտաքին նմանութիւնն է պատճառը, որ շիրաչի փոփոխութիւնը նոյնպէս անւանել են եփումք: Այսպէս

<sup>1)</sup> Այդ յօդուածը արտատպած է առանձին բրոշիւրով:

ուրիմն շաքարից գոչացած նիւթերից մնում է հեղուկի մէջ միայն ալկոհոլը, իսկ ածխաթթւաւոր անհետանում է... Բայց քիմիայից յայտնի է, որ շաքարը ինքն ըստ ինքեան առանց արտաքին ոչժի չի լուծուում: Ուրիմն այն ինչ արտաքին ոչժ է, որը լուծում է շաքարը շիրաչի մէջ՝<sup>1)</sup>:

Այդ ոչժի մասին տարբեր կարծիքներ կային գիտութեան մէջ: Խաղողի շիրաչի եփմանը բոլորովին նման է զարեջրի շիրաչի եփումը: Իսկ յայտնի է, որ՝ երբ ուզում են եփումն առաջացնել զարեջրի շիրաչի (ПНВНОЕ СУСЛО) մէջ զարեջուր պատրաստելու նպատակով, անպատճառ աւելացնում են շիրաչի մի ինչ որ նիւթ, որը անւանւում է Ֆերմէնտ:

Առանց Ֆերմէնտի չի եփուում զարեջրի շիրան: Այնեւէ է, որ եփման պատճառները պէտք էր որոնել Ֆերմէնտի մէջ: Վաղուց արդէն Կանեար-Լատուր՝ը և Շւաննը՝ գիտելով Ֆերմէնտը միկրոսկոպի տակ, դառել էին, որ Ֆերմէնտը բաղկացած է կենդանի էակներից-միկրոօրգանիսմներից: Այդ վերջիններից լինում է մեծ քանակութեամբ նաև խաղողի շիրաչի մէջ եփման ժամանակ, թէև այս դէպքում արեւստական կերպով Ֆերմէնտ չեն աւելացնում:

Ինչպէս վերաբերել այն Ֆակտերին, որ Ֆերմէնտը բաղկացած է կենդանի միկրոսկոպական էակներից: Հարկաւոր է դրանից եզրակացնել, որ Ֆերմէնտը եփումն է արտադրում հէնց այն պատճառով, որ բաղկացած է կենդանի էակներից: Ուրիշ խօսքերով՝ հարկաւոր է արդեօք եզրակացնել, որ հէնց այդ կենդանի էակներն են եփումն արտադրողները, թէ ընդհակառակը նրանք ոչինչ դեր չեն կատարում և առանց նրանց էլ կարող է շիրան եփւել:

Մինչև Պաստեօրը, գիտութեան մէջ արիւմ էր այն համոզմունքը, թէ եփումը ոչինչ կապ չունի միկրոօրգանիսմներից, որոնք միայն պատահմամբ են զտնւում շիրաչի մէջ: Այդ համոզմունքը կազմել էր գլխաւորապէս հռչակաւոր Լիբիխի ազդեցութեան տակ: Այդ գիտնականը ապացուցանում էր, որ Ֆերմէնտը կազմող մանր էակները ոչինչ ներգործական դեր չեն կատարում եփման ժամանակ: Ֆերմէնտը, ըստ Լիբիխի, ընդունակ է լուծել շիրաչի

<sup>1)</sup> Տես իմ «Միկրոօրգանները» էջ 21 կամ «Մուրճ»-1891 թ.:

շաքարը, կամ որ միևնոյն է ընդունակ է եփումն արտադրել ոչ այն պատճառով, որ բաղկացած է կենդանի էակներից, այլ որ ինքը (Ֆերմէնտը) ընդունակ է հեշտ լուծւելու ընչպէս, օրինակ, շարժւող մարմինը, ասում է Լիբիխը, դիպչելով մի ուրիշ մարմնին, շատ անգամ նրան էլ շարժումն է հաղորդում, այնպէս էլ լուծւող Ֆերմէնտը ընդունակ է հաղորդել (շիրայի) շաքարին լուծւելու ընդունակութիւնը:

Ուրեմն, Լիբիխի կարծիքով, շիրան եփ տալու համար հարկաւոր է, որ անպատճառ Ֆերմէնտ աւելացնեն. ամեն մի լուծւող օրգանական նիւթ ընդունակ է լուծել շաքարը, ուրեմն և ընդունակ է եփումն արտադրել շիրայի մէջ<sup>1)</sup>:

Այդպէս էին դատում Լիբիխը և նրա հետ միասին համարեա բոլոր միւս զիտնականները: Կար և մի ուրիշ ուսում, այն է Բերցելիուսի և Միչերլիխի թէօրիան, բայց այդ վերջինն էլ ոչինչ նշանակութիւն չէր տալիս միկրօօրգանիսմներին:

Պատեօրը բազմաթիւ փորձեր արաւ շիրայի և կաթնի փոփոխութիւնների պատճառը գտնելու համար և վերջ ի վերջոյ եկաւ բոլորովին հակառակ եզրակացութեան: Նրա կարծիքով շիրայի եփումը արտադրում են հէնց նոյն կենդանի էակները, որոնցից բաղկացած է Ֆերմէնտը և որոնց վերայ ոչինչ ուշադրութիւն չէին դարձնում Միչերլիխը, Բերցելիուսը և Լիբիխը:

Այդ միտքը սպացուցանելու համար Պատեօրը վերցնում էր մի ապակէ անօթ, լցնում շիրայով, բաւական պահում կրակի վերայ, որպէս զի հեղուկի մէջ գտնւող միկրօօրգանիսմները մեռնին բարձր ջերմութեան ներքոյ և յետոյ ամուր կողպում: Փորձը ցոյց տւեց, որ այդ պայմաններում շիրան եփ չի գալիս, այսինքն շաքարը չի լուծւում, նոյն իսկ շատ տարիների ընթացքում: Բայց՝ երբ Պատեօրը երկար ժամանակից յետոյ բաց էր անում անօթը և հեղուկի մէջ գցում վերոյիշեալ օրգանիսմներից մի ամենաչնչին քանակութիւն, չէր անցնում երկու-երեք օր և հեղուկը սկսում էր եփ դալ:

Այդ տեսակ փորձեր նա արաւ շատ անգամ և ամեն անգամ

<sup>1)</sup> Միկրօօրգանները, էջ 22, կամ «Մուրճ» 1891 թ.

փորձերից զուրս էր գալիս միեւնոյն հետեւանքը, այն է որ շիրան երբէք եփ չի գալիս առանց նոյն միկրօօրգանիսմաների: Պարզ է որ եփման նպատճառը այդ կենդանի մանր էակներն են: Միեւնոյն ժամանակ Պաստերը ցոյց տւեց, որ այն փոփոխութիւնները, որոնք յաճախ կատարուում են կաթնի մէջ, նոյնպէս կենդանի էակների գործունէութեան արդիւնք են:

Իրան հետեւեց մի նոր զիւտ: Պաստերը ապացուցեց, որ զինու քացախելը չի կարող կատարւել առանց մի տեսակ վերին աստիճանի մանր միկրոբների: Երբ այս վերջինները ընկնում են զինու մէջ, զինին տաք ժամանակը քացախում է, հակառակ դէպքում, այսինքն երբ այդ օրգանիսմներից չը կայ զինու մէջ, զինին չի կարող քացախել նոյն իսկ ամենատաք եղանակում:

Այդ դեռ բաւական չէ. շուտով բացատրւեց, որ կենդանիների և բոյսերի զիակների լուծւելը կատարուում է մի տեսակ միկրոբների ազդեցութեան տակ: Ուրեմն եթէ չը լինէին այդ միկրոսկոպական էակները, չէր էլ կարող կատարւել զիակների լուծւելը:

Ընթացողը կարող է կարծել, որ Պաստերի զիւտերը վերաբերեալ շիրաչի եփմանը, կաթնի կամ զինու փոփոխութիւններին էնքան էլ մեծ զիւտեր չեն: Բայց այդ սխալ է:

Այդ զիւտերը, բացի նրանից, որ ունին նշանակութիւն մասնաւորապէս զինեզօրծութեան կամ կաթնազոցծութեան համար, ունեն և ահագին ընդհանուր նշանակութիւն: Իրանցով առաջին անգամ բացատրւեց միկրօօրգանիսմների դերը բնութեան մէջ. մինչև Պաստերը դիտութեան մէջ տիրում էր այն համոզմունքը, որ բնութեան տարածւած միկրոբները ոչինչ նշանաւոր ներգործական դեր չեն կատարում աշխարհում. և երբ մի որ և նիւթ հետազօտելիս զտնում էին նրա մէջ բազմաթիւ միկրոբներ, վերջինների վերայ ոչինչ ուշադրութիւն չէին դարձնում, և երևոյթի պատճառները որոնում էին միկրոբներից զուրս:

Պաստերը՝ եփման վերաբերեալ իր զիւտերով, առաջին անգամ ապացուցեց, որ միկրոբներ ընդունակ են ահագին փոփոխութիւններ կատարելու: Պաստերի զիւտերից յետոյ զիտնականները սկսեցին ուրիշ աչքով նայել միկրոբների վերայ, այժմ զիտնականները ցանկանալով բացատրել այս կամ այն փոփո-

խուժիւնը, որը կատարուում է զանազան նիւթերի մէջ, ամենից առաջ վերցնում են մի փոքր այդ նիւթից և դիտում միկրոսկոպի տակ, որպէս զի տեսնեն, թէ արդէօք նրա մէջ չը կան միկրոբներ:

## II

1857 թւին, այսինքն 35 տարեկան հասակում, Պաստօրը հրաւիրեց իբրև դասատու Պարիզի Ecole normale բարձրագոյն ուսումնարանը: Նոր ստացած տեղը շատ փառաւոր էր Պաստօրի համար, սակայն մի բան որ նրան սաստիկ ցաւեցնում էր, այն էր, նրա համար չը կար լաբորատորիա ուսումնարանում: Պէտք է նկատեմ, որ այդ ժամանակներում Ֆրանսիայում գիտութիւնը այնքան էլ չէր յարգւած, նոյն իսկ հանճարեղ Կլոդ Բերնարը չէր կարող հպարտանալ իրա լաբորատորիայով, որը ներկայացնում էր մի նեղ ու խոնաւ սենեակ: Ֆրանսիական կառավարութիւնը սաստիկ ժլատ էր համալսարանների վերայ ծախսեր անելում:

Այդ պատճառով Պաստօրը վճռեց իր հաշուով մի փոքրիկ լաբորատորիայ շինել Ecole normale-ի վերնատանում, որ և շուտով իրագործեց:

Եփման երևոյթները պարզելուց յետով, Պաստօրը անցաւ միկրոբների ծագման հարցին: Պաստօրին մի բան դրդեց այդ հարցով զբաղւելու. գիտնականների շրջանում տարածւել էր մի վերին աստիճանի փնասակար և սխալ ուսում միկրոբների ծագման վերաբերմամբ: Մի քանի գիտնականներ, որոնցից ամենանշանաւորներն էին Լիբիխը և Պուշէն, քարոզում էին այն միտքը, թէ իբր միկրոսկոպական էակների ծագումը տարբերուում է միւս օրգանիսմների ծագումից: Նրանց ասելով՝ տարբերութիւնը նրանում էր կայանում, որ միկրոսկոպական էակները գոյանում են զանազան մեռած նիւթերից, օրինակ կաթից, մսից և այլն, մինչդեռ միւս օրգանիզմները ծնւում են միմիայն իրանց նման կենդանի օրգանիզմներից, օրինակ մուկը ծնւում է մկնից, վարդենին առաջանում է վարդենուց...

Ուրեմն այդ գիտնականների կարծիքով միկրոբներ կարող են գոյանալ մսից, գինուց և միւս նիւթերից մինչև այն ժամանակ, երբ այդ նիւթերը բոլորովին չեն պա-

բուսականում ոչ մի կրոքներ, ոչ էլ նրանց սաղմերը:

Այդ տեսակ ծագումը անւանում էին «ինքնագոյ ծագում»<sup>1)</sup>: Թէև «ինքնագոյ ծագման» ուսումը բոլորովին սխալ էր, բայց կուէլ նրա դէմ մեծ զժարութիւններ էր ներկայացնում: առաջինը այն պատճառով, որ նա սաստիկ տարածւած էր, երկրորդը՝ որ նրան պաշտպանում էին ամենաերևելի գիտնականները:

Չընայած դրան, Պաստերին վերջ ի վերջոյ յաջողեց ցոյց տալ այդ ուսման անճշտութիւնը և ապացուցանել, որ մի կրոքները երբէք չեն կարող գոյանալ զանազան մեռած նիւթերից (մսից, կաթնից), այլ առաջանում են նոցնպէս իրանց նման կենդանի օրգանիզմներից— մի կրոքներից կամ թէ նրանց սաղմերից:

Միմիայն այն նիւթերում կարող են միկրոքներ գոյանալ, որոնց մէջ կան միկրոքների սաղմեր: Աւրեմն՝ ինչպէս ապացուցեց Պաստերը, միկրոքները իրանց ծագումով բոլորովին նման են միւս բոլոր օրգանիզմներին:

70-ական թւականների կիսում դուրս եկաւ Պաստերի նշանաւոր աշխատութիւններից մէկը— Etudes sur le vin (ուսումնասիրութիւններ գինու մասին), որը պարունակում է իւր մէջ Պաստերի զիտերը վերաբերեալ գինու հիւանդութիւններին: Գինու հիւանդութիւն անւանում են այն փոփոխութիւնները, որոնց շնորհիւ գինին փշանում է և անպէտք դառնում գործածութեան համար: Գինու դառնանալը, քացախելը, ջուր կորելը, թանձրանալը— ահա գինու հիւանդութիւնները:

Այդ տեսակ հիւանդութիւնները շատ են պատահում գինու հետ:

Մինչև Պաստերը արդէն յայտնի էր, որ փչացած կամ հիււանդացած գինիների մէջ միշտ լինում են զանազան տեսակ մանր միկրոսկոպական էակներ, սակայն բոլորն էլ հաւատացած էին, որ միկրոքները սլինչ դեր չեն կատարում գինու փշանալում:

Պաստերը անդրդուելի կերպով ապացուցեց, որ գինու փշա-

<sup>1)</sup> Ֆրանսերէն՝ *génération spontanée*, ռուսերէն՝ *самопроизвольное зарождение организмов*.

նալու պատճառը հէնց նոյն կենդանի միկրոսկոպական էակներն են, որոնք միշտ ներկայ են լինում փշացած գինիներում: առանց այդ միկրոբների՝ գինիները երբէք չէին կարողանալ փշանալ կամ շիւանդանալ:

Պատեօրը ոչ միայն պարզեց գինու փշանալու երևոյթները, այլ և հնար գտաւ նրա (փշանալու) առաջն առնելու համար:

Պատեօրը ցոյց տւեց, որ գինին պատրաստելու ժամանակ նրա մէջ ընկնում են ի միջի աչլոց և ֆլասակար միկրոբներից սաղմեր, որոնք մեծ քանակութեամբ լողում են օդի մէջ:

Խառնելով գինու հետ, այդ սաղմերը մի քանի ժամանակից յետոյ սաստիկ զարգանում են և փշացնում գինին:

Գինու ամեն մի տակառը, ամեն մի շիշը անպատճառ պարունակում են իրանց մէջ հիւանդութեան պատճառը—ֆլասակար միկրոբներին: Դրանով է բացատրւում, որ համարեա բոլոր գինիները ընդունակ են յայտնի պայմաններում փշանալ:

Ուրեմն գինու փշանալու պատճառը կենդանի էակներ են. եթէ դրանք չը լինէին գինու մէջ, վերջինս երբէք չէր փշանալ:

Ի՞նչպէս ոչնչացնել այդ ֆլասակար միկրոբներին:

«Այնպէս՝ ինչպէս կարելի է ոչնչացնել և ամեն մի կենդանի օրգանիզմին, այն է տաքութեամբ»—ասում է Պատեօրը:

Եւ իրաւ նա ապացուցեց, որ եթէ շիշերը լաւ կողպելուց յետոյ ցնեք տաք ջրի մէջ, որի ջերմութիւնը լինի մօտաւորապէս 60 աստիճան, այդ տաքութիւնը սպանում է բոլոր միկրոբներին և ազատում գինին այդ անցանկալի հիւրերից:

Միկրոբներին ոչնչացնելու համար բաւական է շիշերը մի քանի րոպէ միայն պահել տաք ջրում: Փորձը ցոյց է տալիս, որ բարձր ջերմութեանը ենթարկւած շիշերի գինին այլ ևս չի փշանում, նոյն իսկ շատ տարիների ընթացքում:

Այդպիսով Պատեօրի առաջարկած հնարը, որը ի պատիւ նրա անւանւում է pasteurisation (պատեօրացում), ահագին նշանակութիւն ունի գինեգործութեան համար:

Նոյնպէս մեծ նշանակութիւն ունի և այն նորութիւնը, որ Պատեօրը մտցրեց քացախի արդիւնաբերութեան մէջ. ուսումնասիրելով գինու քացախումը, նա համոզեց, որ այդ երևոյթը կա-

տարւում է շնորհիւ մի տեսակ միկրոօրնների, որոնք անւանուում են միկոդերմա ացետի (mycoderma aceti):

Պաստեօրը հետազօտեց քացախ պատրաստելու միջոցները, որոնք զործադրուում էին Ֆրանսիայում, և գտաւ նրանց անբաւարար: Յետոյ նա առաջարկեց իւր աւելի կատարելագործած միջոցը քացախ պատրաստելու համար: Պաստեօրի հետազօտութիւնները վերաբերեալ քացախին անփոփւած են նրա Etudes sur le vinaigre գրածքում:

\* \*

Այդ ժամանակներն էին, երբ ամբողջ Եւրոպայում շերամապահութիւնը ենթարկւեց մեծ վտանգի, շնորհիւ մի ինչ որ հիւանդութեան, որը անւանուում էր Պեբբիխա: Այդ մի տեսակ տարափոխիկ հիւանդութիւն է, որը սարսափելի կերպով կոտորում էր շերամի որդերին: Կարճ ժամանակում պեբբիխան աւերեց Եւրոպայի գլխաւոր շերամապահական կենտրոնները:

Ժողովուրդը շատ երկիրներում շնորհիւ այդ հիւանդութեան ընկել էր թշուառութեան մէջ: Բոլորին էլ յուսահատեցրել էր այն հանգամանքը, որ ոչ մի միջոց չէր կարողանում սարսափելի հիւանդութեան առաջն առնել:

Տէրութիւնները մեծ ջանքեր էին անում շերամապահութիւնը վերականգնեցնելու համար, բայց բոլորը մնում էր առանց հետեւանքի:

Յայտնի էր միայն, որ հիւանդութեան պատճառը մանր միկրոօսկոպական էակներ են: Այդ էակներով լցւած է լինում հիւանդ որդնի մարմինը: Եթէ մի շերամատան մէջ կան մի քանի պեբբիխայով հիւանդ որդներ, նրանք կարող են վարակել և առողջներին:

Սակայն ամենից վատը այն է, որ հիւանդութիւնը ժառանգաբար փոխւում է. եթէ վարակւած է շերամի թիթեռը, նրա տւած սերմն էլ լինում է վարակւած: Այդ բանը կարելի է ստուգել միկրոսկոպի օգնութեամբ. եթէ հիւանդ թիթեռի մարմինը արորենք ջրի մէջ և դիտենք միկրոսկոպի տակ, մենք կը գտնենք, որ մարմինը լցւած է միկրոսկոպական օրգանիզմներով: Նոյն միկրոսկոպը ցոյց է տալիս, որ հիւանդ թիթեռների սերմը պարունակում է իւր մէջ մեծ քանակութեամբ նոյն էակներից:

Ձը նայած նրան, որ հիւանդութեան պատճառը գտնւած էր, զիտնականները չէին կարողանում այնպիսի միջոց առաջարկել, որը կանգնեցնէր հիւանդութեան աւերումները:

Վերջապէս Պաստօրը հրաւիրեց ուսումնասիրելու այդ հիւանդութիւնը և հնար գտնելու նրա դէմ:

Պաստօրը ընդունեց հրաւերը և 1865 թիւն ուղևորեց Պարիզից Ալէ, որը գտնուում է Ֆրանսիայի հարաւային կողմերում: Երամսպահուածութեամբ պարապուող ժողովրդի դրութիւնը այնքան ողբալի էր, որ Պաստօրը իրան խօսք տուեց չը վերադառնալ Պարիզ մինչև որ չի ուսումնասիրիլ հիւանդութիւնը և չի յաղթիլ նրան: ասում է Վալերի Բադոն:

Պաստօրը շուտով բոլորովին խորասուզեց շերամսպահական հետազօտութիւնների մէջ, նրա տունը դարձաւ շերամստուն: Պաստօրի կինը և աղջիկը չէին մնում առանց մասնակցութեան. նրանք օգնում էին՝ ինչքան կարող էին:

Տոկուն աշխատանքը չը մնաց առանց հետևանքի. Պաստօրին յաջողեց գտնել հիւանդութեան առաջն առնելու միջոցը, որին վիճակւած էր ոտքի կանգնեցնելու շերամսպահութիւնը:

Պաստօրի միջոցը կոչուում է ցելլուլազային գրեկնաժուտումն է նա կայանում:

Ի՞նչու դալով այն իրողութիւնից, որ սերբինան ժաւանդակն է, ուստի և հիւանդութիւններից ստացած սերմը (spora) նոյնպէս վարակւած է լինում հիւանդութեամբ, Պաստօրը առաջարկեց՝ բոլոր թիթեաներին մինչև սերմ ածելը բաժանել զոչգերի, որոնցից ամեն մէկը (զոչգը) պէտք է լինի բազկացած մի էգից և մի որձից: Այդ զոչգերը պէտք է պահել առանձին-առանձին, որպէս զի ամեն մի զոչգը առանձին և որոշ տեղ սերմ ածի:

Նրբ թիթեաները կը վերջացնեն սերմ ածելը, այն ժամանակ պէտք է վերցնել մի զոչգ թիթեաներին, տրորել նրանց մարմինը ջրի հետ և հետազօտել միկրոսկոպի օգնութեամբ. եթէ միկրոսկոպը ցոյց կը տայ, որ թիթեաները վարակւած են վնասակար մանր օրգանիզմներով, իսկոյն հարկաւոր է այդ զոչգի ածած սերմը ոչնչացնել: Այդպէս պէտք է հերթով հետազօտել բոլոր զոչգերի

մարմինները, ոչնչացնել վարակած զոյգերի սերմը և պահել մի-  
միա չն բոլորովին առողջ զոյգերի <sup>1)</sup> սերմը:

Եւ եթէ հաւանենք միայն առողջ զոյգերի սերմը, մենք կարող  
ենք բոլորովին հաւաստի լինել, որ նրանից ստացած որդիերը  
կը լինեն բոլորովին առողջ:

Ահա ցելլիւլական գրենաժի գլխաւոր կէտերը: Այդ միջոցը  
արդէն ահազին օգուտներ է տւել շերամապահութեամբ պարապուող  
ժողովրդին արասահմանում և վերին աստիճանի ցանկալի է որ  
նա լայն կերպով տարածւի և մեզ մօտ կովկասում:

Երբ վերջացրեց Պակտօրը իւր երևելի հետազօտութիւն-  
ները <sup>2)</sup>, նրա հետ պատահեց մի անբաղդութիւն — նա կաթւածա-  
հար եղաւ և քիչ էր մնում որ մեռնի: Թէև մի քանի ժամանակից  
ցետոյ նա առողջացաւ, բայց նրա մարմնի մի մասը մինչև հիմա  
էլ թոյլ է:

Առողջանալուց ցետոյ Պաստօրը ձեռնարկեց գարեջրի հիւանդ-  
դութիւնների ուսումնասիրութեանը, որի հետեանքը եղաւ նրա  
ամենաերևելի գրած քերից մէկի — Etudes sur la bière՝ի լոյս  
տեսնելը:

Պաստօրը ապացուցեց, որ գարեջրի հիւանդութիւնները  
(կամ փշանալը), զինու հիւանդութիւնների նման, արդիւնք են զա-  
նազան վնասակար միկրոբների գործունէութեան: Եթէ գարեջրի  
մէջ չը լինէին վնասակար միկրոբներ, նա չի փշանալ, ասում է  
Պաստօրը:

Որովհետև զինու և գարեջրի փշանալու պատճառը միևնոյնն  
է, այդ պատճառով Պաստօրը նրանց պահպանելու համար միևնոյն  
միջոցը առաջարկեց — այն է պաստօրիզացիա, որի հետ մենք ար-  
դէն ծանօթ ենք:

(Վերջը չաջորդ համարում)

<sup>1)</sup> Որոնց մարմնի մէջ չը կան վնասակար օրգանիզմներից:

<sup>2)</sup> Շերամապահութեանը վերաբերող հետազօտութիւնները ամփոփ-  
ած են նրա կլասիկական մեմուարում — Etudes sur la maladie des vers  
à soie.